ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ ԼՈՒՍԱԳՅՈՒՂ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

«06 » մայիսի - 2017թ. թիվ 10-Ա

ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՇՏԱԲԱՅԻՆ ՈՒՍՈՒՄՆԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն <<ՀՀ Արմավիրի մարզի բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության համակարգերի նախապատրաստման 2017թ-ի հիմնական միջոցառումների պլանի>> 5.2.2. կետի պահանջների, իմ ղեկավարությամբ, Լուսագյուղ համայնքում 29.05.2017թ. անցկացվելու է շտաբային ուսումնավարժություն << Քաղաքացիական պաշտպանության միջոցառումների կազմակերպումը հակառակորդի հարձակման վտանգի դեպքում >> թեմայով:

Նշված ուսումնավարժությանը ժամանակին նախապատրաստվելու և արդյունավետ անցկացնելու նպատակով.

ԿԱՐԳԱԴՐՈՒՄ ԵՄ՝

1. ՈՒսումնավարժության ղեկավարի տեղակալ նշանակել համայնքի ՔՊ շտաբի պետ՝ Ա.Սիմոնյանին.
2. ՈՒսումնավարժությունում ներգրավել՝
- համայնքի ՔՊ շտաբին,
- համայնքի տարահանման հանձնաժողովին,
- համայնքի ՔՊ կազմավորումների հրամանատարներին.
3. ՈՒսումնավարժության ղեկավարի տեղակալին.
- Համագործակցել Արմավիրի մարզային փրկարարական վարչության հետ ուսումնավարժության նախապատրաստման և անցկացման փաստաթղթերի մշակման հարցերով:
- Մինչև 11.05.2017թ. մշակել և իմ հաստատմանը ներկայացնել ուսումնավարժության նախապատրաստման օրացուցային պլանը:
- Ապահովել անցկացման փաստաթղթերի ժամանակին մշակումը և մինչև 18.05.2017թ. ներկայացնել հաստատման:
- Կազմակերպել ուսումնավարժության մասնակիցների նախապատրաստումը համաձայն հաստատված օրացուցային պլանի:
- Ուսումնավարժության անցկացմանը պատրաստ լինելու մասին զեկուցել մինչև 23.05.2017թ.:

4. Սույն հրամանը հայտարարել ըստ առնչության:
5. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահում եմ ինձ:

Ուսումնավարժության ղեկավար Ս. Կարապետյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԼՈՒՍԱԳՅՈՒՂ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիր մարզի Լուսագյուղ համայնք
ՀՀ Արմավիրի մարզ գ.Լուսագյուղ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

01 ՀՈՒՆԻՍԻ 2017թվականի N 13

ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի առաջին մասի 7-րդ կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Լուսագյուղ համայնքի ավագանու 2017 թվականի հունվարի 31-ի թիվ 07-Ա որոշումը.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Լուսագյուղ համայնքի բնակչուհի՝ Աննա Ներսիսյանին ամուսնու մահվան կապակցությամբ հատկացնել դրամական օգնություն՝ 50000 /հիսուն հազար/ Հայաստանի Հանրապետության դրամ գումարի չափով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԻԲԵԿ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

2017 թվականի հունիսի <01>>
Գ.Լուսագյուղ
Ժամը՝ 12^{00}

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԼՈՒՍԱԳՅՈՒՂ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիր մարզի Լուսագյուղ համայնք
ՀՀ Արմավիրի մարզ գ.Լուսագյուղ

ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

02 ՄԱՅԻՍԻ 2017թվականի N 09

ԱՐՇԱՎԻՐ ՖՐՂՈՅԱՆԻՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Աշխատանքային օրենսգրքի 85-րդ հոդվածով, 94-րդ հոդվածի առաջին մասի 2-րդ մասով, հիմք ընդունելով 2017 թվականի ապրիլի 3-ի N 1 աշխատանքային պայմանագիրը և Արշավիր Ֆրղոյանի դիմումը.

ԿԱՐԳԱԴՐՈՒՄ ԵՄ՝

1. Արշավիր Ֆրղոյանին 2017 թվականի ապրիլի 3-ից նշանակել աշխատանքի Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Լուսագյուղ համայնքի անասնաբույժ:

2. Աշխատավարձի դրույքը սահմանել 0,5: Դրույքաչափը սահմանել 72752 ՀՀ դրամ:

3. Աշխատանքային պայմանագիրն ուժի մեջ է 2017 թվականի դեկտեմբերի 31-ը:

4. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

X

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԻԲԵԿ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

2017 թվականի մայիսի <<02>>
Գ.Լուսագյուղ
Ժամը՝ 10^{00}